

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Հուլիսի 26-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 83 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր հիսունմեկ, աշխատանքի տեղավորման՝ քսանհինգ, տանիքի վերանորոգման՝ երկու, բնակարանի վերանորոգման՝ չորս, բնակարանով ապահովելու մասին՝ մեկ քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից քառասունինին տրվել է դրական լուծում, երկուսը՝ մերժվել է:

Աշխատանքի տեղավորման մասին քսանհինգ դիմումներից երեքին տրվել է դրական լուծում, քսաներեքը՝ վերցվել են հաշվառման:

Մարզպետ Վ. Հակոբյանի հանձնարարությամբ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում ուսումնասիրման ընթացքի մեջ են գտնվում տանիքի, բնակարանի վերանորոգման և բնակարան հատկացնելու մասին դիմումները:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ